նայ ճիշդ յիշեալ թուականէն վերջ՝ յետ յուլիս 19ի, երբ յիշատակուած Թօփալ Օսման – թէև շատ տեղէ վիրաւոր – արիացած՝ գլուխ կ՝անցնի բանակին ու խորտակելով պարսիկները՝ մեծ հանդէսով Պաղտատ կը մտնէ։ Սակայն պատմութիւնը կ՝ըսէ որ ցնծութիւնը կարճատև կ՝ըլլայ, վասն զի երեք ամիս վերջ յաղթութիւնը պարսիկներուն կողմը կը դառնայ։

Անդրադարձնենք նաև, որ մեր հետևեալ թուղթին մէջ բերուած Թօփալ Հասան և Օսման անունները միևնոյն անձը կը ներկայացնեն։

Գերայարգելոյ և վսեմագունի տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի և Աբբայ Հօրն մերում

. . . Նա և զայս ծանիր, զի զօրքն պարսից մեծաւ պատրաստութեամբ կանխաշարժութեամբ չուեալ ի յիսպահանու գնացեալ և պաշարեալ են նպաստութեամբ քրտից և արապից զՊաղտատ, և յետ ոմանց ամսոց պատճառաւ սովու առանց մարտի առեալ են զնա։ Եւ մինչ լուան ոմանք զայսպիսի լուրս, զմեծագոյն խելագարութիւն վարկեցին գնալն նոցին ի Պաղտատ ասելով, թէ այսքան երկրներն թողեալ են ի ձեռն տաճկաց, և գնացեալ են առնուլ զանառիկ քաղաքն այն։ Իսկ այլք ոմանք իմաստակք զներհակն նոցին կալնլով, առաւել զմեծ իմն խոհեմութիւն վարկեսցին գնալն նոցին ի Պաղտատ, քան թէ Իրէվան, և առ այս բերեն զերկուս պատճառս, որոց մինն է այս, ասեն, թէ յոյժ առաւել դիւրին է զօրացն պարսից գնալ ի Պաղտատ, քան թէ ի Նախչէվան և Իրէվան, և այս ի կողմանէ նախաշարժութեան, և թէ ի կողմանէ նպաստիցն, որք կարեն դիւրաբար օգնել։ Երկրորդն է զի զսոյն քաղաքն առնլով, թերևս այսու ընկճեալ զօրքն տաճկաց հաճեալ կամիցին ըստ առաջնոյ նուագին տալ զԷրէվան և զայլս քաղաքս, զորս ունին սոքա փոխանակ Պաղտատու, ըստ որում նախապէս եղեալ է, այսինքն ի ժամանակս սուլթան Մուրատին և շահապլասին։ Նա և ոմանք ասա ի մեծամեծաց ասացին, թէ Թօփալ հասան փաշան ի Տեառպէքրու չուեալ երեսուն հազար արամբք զինուք վառեցելովք կամեցեալ է գնալ ի Պաղտատ առ ի վանել զզօրսն պարսից. իսկ գիտելով զայս զօրուն պարսից իմիք դժուարին տեղւոջ, հուպ Նինուէի յանկարծակի ի դրանէ անտի յարուցեալ են ի վերայ տաճկաց զօրուն, և գրէթէ զբոլորն ի սուր սուսերի մաշեալք են. և Ոսման փաշա 500 անձամբք հազիւ կարացեալ է փախչիլ և գալ ի Տեառպէքիր։ Եւ սոյն յաղթութիւնս և կամ առումս որ եղև, ոչ սոսկ զօրութեամբ և քաջութեամբ պարսից լեալ իցէ, այլ և քրտից և արապից, զի մասն քրտից Պարսկաց հակեալ են ի կողմն պարսից։ Եւ վասն այնորիկ զօրքն տաճկաց մասն ինչ ի կողմն Պաղտատու գնան, և մասն ինչ ի վերայ քրտից . . . . ։

Գերայարգութեան քում
Նուաստագոյն ծառայ
Եղիա վարդապետ

Ցամի փրկութեան մերոյ
1733 Մայիսի 9
(Պելկրատ)

ԽԷ.

Ընդհանրապէս Բարդողիմէոս վարդապետի առ Մխիթար Աբբահայր ունեցած թղթակցութիւնը ցարդ հետաքրքրական եղաւ մեզ՝ իր պարունակած զանազան օգտակար նիւթերուն համար։ Այժմ իր առաքելական գործունէութեան շուրջ նոր տեղեկութիւն մը կու տայ. այսպէս.